ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուրուգվայի Զբոսաշրջության եւ սպորտի նախարար Լիլիամ Քեշիշյանի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանի:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ հայ ժողովրդի զավակներն օգտաշատ ծառայություն են բերում եւ պետական բարձր պաշտոններ զբաղեցնում Ուրուգվայի պետական կյանքում՝ հարգանք ու պատիվ հավելելով մեր ժողովրդի բարի անվանը: Ապա անդրադառնալով Ուրուգվայի հայ համայնքային կյանքին՝ Նորին Սրբությունն իր երախտագիտությունը փոխանցեց երկրի պետական իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների հանդեպ ցուցաբերվող հոգատարության համար: Ամենայն Հայոց Հայրապետը մասնավոր գոհունակությամբ ընդգծեց, որ Ուրուգվայն առաջին երկիրն է, որ ճանաչել եւ դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, ինչն արտահայտությունն է հայ ժողովրդի հանդեպ տածած սիրո, հարգանքի եւ գնահատանքի:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ Հայաստանի եւ Ուրուգվայի բարեկամական հարաբերությունների մասին, որոնք զարգանում են՝ ընդգրկելով գործակցության նորանոր ոլորտներ:

Իր հերթին Ուրուգվայի Զբոսաշրջության եւ սպորտի նախարար Լիլիամ Քեշիշյանն ուրախություն հայտնեց համայն հայության հոգեւոր կենտրոնում հյուրընկալվելու առիթով: Նախարարը կարեւորեց երկու երկրների ջերմ գործակցային հարաբերությունների ամրապնդումը տարբեր բնագավառներում, մասնավորապես զբոսաշրջության զարգացման ոլորտում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր ողջույնները փոխանցեց Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկային, ում հետ հանդիպել էր Ուրուգվայ կատարած հովվապետական այցի ժամանակ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր մաղթանքները հղեց Ուրուգվայի հայ համայնքին՝ հորդորելով շարունակել ամուր ու հաստատուն պահել համայնքային կյանքը եւ կարեւոր ներդրում ունենալ Ուրուգվայի կյանքում:

Ադրբեջանի ավագանի Լիլիան ամիրեժեա ձեզվելովը Ս. Է. Գրիգորյանը